

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երաշխավորվել է

Ներկայացնել Գիտական խորհրդի հաստատմանը

Գիտակոորդինացիոն խորհրդի

27.02.2019թ. թիվ 3 նիստում



Հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր

Գ. Ա. Ավետիսյան

Կարիերայի կենտրոնի ղեկավար

Խ. Ս. Մարգարյան

Իրավաբանական բաժնի պետ

Մ. Ռ. Սողոմոնյան

Ռեկտորի խորհրդական

Ի. Ե. Աբգարյան

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) *Կարիերայի Կենտրոնը* (այսուհետ՝ Կենտրոն) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է:

3. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշումներով և սույն կանոնակարգով:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնի հիմնական խնդիրն է ապահովել Համալսարանի բնականոն գործունեությունը, այդ թվում.

1) գործունեության ծավալումը երեք հիմնական ուղղություններով՝ Համալսարանի ուսումնական գործընթացների մարքեթինգ, շրջանավարտների հետ կապ և ուսանողների ու երիտասարդ մասնագետների կարիերայի զարգացում,

2) կրթության և Համալսարանական հիվանդանոցներում մատուցվող բուժական ծառայությունների որակի բարձրացման նկատառումներից ելնելով, Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ, առաջակությունների մշակում,

3) Համալսարանի կրթական մարքեթինգային ռազմավարության մշակման իրականացման աջակցություն. տեղական և միջազգային կրթական շուկայում սպառման և տեղեկատվական-գովազդային ապահովման համալիր միջոցառումների աջակցություն,

4) Կրթական շուկայում Համալսարանի կողմից մատուցվող կրթական արտադրանքի և Համալսարանական կլինիկաներում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների առաջնդման նպատակով տեղական և միջազգային աշխատաշուկայի զարգացման միտումների, միջազգային առաջադեմ համակարգերի և փորձի ուսումնասիրություն և վերլուծություն,

5) շրջանավարտների և Համալսարանի միջև մշտական կապի ապահովում, ինչպես նաև Համալսարանական ակումբի ստեղծում,

6) տեղական և միջազգային հասարակական և պետական կառույցների հետ համագործակցության հաստատում և ներգրավվում Համալսարանական կադրային

կամպուսի ռեսուրսավորման և զարգացման աշխատանքներում, համատեղ վերլուծությունների և ամփոփումների իրականացում,

7) մասնագիտական ասոցիացիաների հետ կապի հաստատում և նրանց ներգրավվում Համալսարանի գործունեության ոլորտներում,

8) գիտության, կրթության, հանրային կյանքի ինչպես նաև այլ ոլորտներում կայացած հայազգի գործիչների հետ կապի հաստատում և նրանց ներգրավվածության ապահովում Համալսարանի զարգացման աշխատանքներում,

9) Շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ Համալսարանում տարվող աշխատանքների կազմակերպում, իրականացում և ամփոփում,

10) Համալսարանի ուսանողների, շրջանավարտների և պոտենցիալ գործատուների միջև արդյունավետ կապի հաստատում,

11) Ուսանողների և շրջանավարտների շրջանում նրանց կարիերայի զարգացման ակնկալիքների, տեղական և միջազգային աշխատաշուկայում մրցունակության ընթացիկ ցուցանիշերի համակարգային վերլուծություն և ամփոփում,

12) շրջանավարտների ներկայացուցչականության բարձրացմանն ուղղված տարաբնույթ դասընթացների, խորհրդատվությունների, սեմինարների, վերապատրաստման կուրսերի և այլ միջոցառումների իրականացում և դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածում,

13) ուսանողների ֆինանսական ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով դոնորների ներգրավում:

14) Համալսարանի զարգացման նպատակով նյութական և ոչ նյութական ռեսուրսների ներգրավում, արտասահմանյան և տեղական դրամաշնորհային ծրագրերի միջոցների ներգրավում:

5. Կենտրոնի գործառույթներն են.

1) Կենտրոնի աշխատանքների թափանցիկության և թիրախային խմբերին հասանելիության ապահովման նպատակով տեղեկատվական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ համացանցային կայքի և (կամ) ենթակայքերի, սոցիալական առաջատար կայքերում Կենտրոնի էջերի, ինչպես նաև շրջանավարտների և ուսանողների ինտերակտիվ բազայի ստեղծում և գործարկում,

2) կրթական արտադրանքի շուկայում հետազոտությունների անցկացման աշխատանքների կազմակերպում,

3) Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների և կրթության որակի վերաբերյալ հասարակական և սպառողների կարծիքի հետազոտություն, ինչպես նաև դրանց արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակում,

4) կրթական շուկայի, բժշկական ծառայությունների պահանջարկի կառուցվածքի, կրթական արտադրանքի և մատուցվող բուժական ծառայությունների առաջնության, կրթական շուկայում վարձավճարների շարժընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կազմակերպում: Կրթական արտադրանքի և Համալսարանական կլինիկաներում մատուցվող բժշկական ծառայությունների վրա ազդող և դրանց հաջող առաջխաղացմանը նպաստող գործոնների ուսումնասիրություն: Մպառողական պահանջարկի (կայուն, երկարաժամկետ և այլն) տեսակների, ինչպես նաև դրանց աճի և նվազման պատճառների ուսումնասիրություն,

5) Կազմակերպատնտեսական, ներդրումային և այլ ուսումնական մարքեթինգային նախագծերի մշակում և իրականացում,

6) Համալսարանի գործունեության և մատուցվող կրթական ծառայություններին հավանական սպառողներին տեղեկացնելու նկատառումներից ելնելով՝ ցուցահանդեսներին, տոնավաճառներին, ցուցահանդես-վաճառքներին Համալսարանի մասնակցության ապահովում, արտասահմանյան կրթական և բժշկական հաստատություններ փոխայցելությունների և դրանց հետ այլ միջոցառումների իրականացում,

7) Գովազդային գործիքակազմի կիրառմամբ միջոցառումների իրականացման ռազմավարության մշակման աջակցություն: Մասնակցություն Համալսարանի և դրա կողմից առաջարկվող կրթական և բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկագրերի, տեղեկատուների, տեղեկատվական-գովազդային գրականության հրատարակմանը և տարածմանը,

8) միջազգային (այդ թվում նաև տարածաշրջանային) կրթական շուկայում մրցակիցների ունեցած մասնաբաժնի, հեղինակության և բրենդների ճանաչվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

9) միջազգային (այդ թվում նաև տարածաշրջանային) մրցակիցների կողմից առաջարկվող կրթական արտադրանքի և մատուցվող բժշկական ծառայությունների թույլ և ուժեղ կողմերի վերլուծություն և առաջարկների մշակում, Համալսարանի գործունեության համապատասխան ոլորտների առաջնական եղանակների, մատուցվող ծառայությունների գնային մարտավարության և մարքեթինգային քաղաքականության մշակման աջակցություն,

10) Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև միջազգային (այդ թվում նաև տարածաշրջանային) աշխատաշուկայի զարգացման դինամիկայի մոնիթորինգի անցկացում և դրա արդյունքների հիման վրա Համալսարանի համապատասխան կառույցներին առաջարկությունների ներկայացում

11) շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն առնչվող ռազմավարական հիմնախնդիրների բացահայտում և վերլուծություն, համակարգային առաջարկների կազմում և ներկայացում Համալսարանի համապատասխան կառավարման օղակներին, ինչպես նաև մասնակցություն դրանց իրականացմանը,

12) սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների և գիտաժողովների, նպատակային պատրաստման և վերապատրաստման դասընթացների, աշխատաշուկայում ներկայացուցչականության տեխնոլոգիաների ու հմտությունների, նեղ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվական և այլ միջոցառումների կազմակերպում: Համագործակցություն համապատասխան գործունեություն ծավալող տեղական և միջազգային հասարակական և պետական կառուցվածքային միավորների հետ:

13) պրակտիկայի, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռք բերման ժամանակակից ձևերի և միջոցների վերաբերյալ Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ առաջարկների և ծրագրերի մշակում ու իրականացում:

14) Համալսարանական ակումբի ստեղծում, դրա շրջանակներում ուսանողների և շրջանավարտների, գիտության, կրթության, հանրային կյանքի ինչպես նաև այլ ոլորտներում կայացած հայազգի գործիչների հետ հանդիպումների կազմակերպում, Հայաստանում և արտերկրում գործող նմանատիպ կառույցների հետ համագործակցության և փորձի փոխանակման իրականացում:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կենտրոնը հանդիսանում է Համալսարանի հետբուհական և շարունակական գծով պրոռեկտորի ենթակայության տակ աշխատող միավոր: Կենտրոնը բաղկացած է ղեկավարից և աշխատողներից:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կենտրոնի հաստիքացուցակի մեջ են մտնում Կենտրոնի ղեկավարը և մասնագետները (այսուհետ՝ նաև աշխատողներ): Կենտրոնի հաստիքացուցակը հաստատվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Կենտրոնի ղեկավարին և մասնագետներին ներկայացվող կրթական և մասնագիտական պահանջները սահմանվում են Համալսարանի իրավական ակտերով:

*Կենտրոնի աշխատողները ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ռեկտորի կողմից մրցութային կարգով կամ առանց մրցույթի նշանակված աշխատողներ են:

*Կենտրոնի աշխատողների հետ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

*Կենտրոնի աշխատողները՝

ա) Իրականացնում են Վարչության խնդիրներից բխող գործառույթներ,

բ) Կենտրոնի աշխատողները պարտավոր են ենթարկվել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, այլ իրավական ակտերին, և կատարել Կենտրոնի ղեկավարի հանձնարարականները:

Համալսարանը կարող է իրականացնել աշխատողների որակավորում, ատեստավորում՝ աշխատողների մասնագիտական գիտելիքների, հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու համար: Աշխատողների որակավորման ստուգումն անցկացվում է փաստաթղթային և/կամ թեստավորման և/կամ հարցազրույցի միջոցով:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1. Կենտրոնի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Համալսարանի ռեկտորը, հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորը և Կենտրոնի ղեկավարը:

2. Կենտրոնն անմիջականորեն ղեկավարում է Կենտրոնի ղեկավարը, որին աշխատանքի է նշանակում Համալսարանի ռեկտորը՝ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորի ներկայացմամբ և ազատում՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Կենտրոնի ղեկավարը՝

1) ներկայացնում է կենտրոնը Համալսարանում և արտաքին շփումների ժամանակ:

2) պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների պատշաճ, ժամանակին և արդյունավետ լուծման համար:

3) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընդհանուր գործունեությունը, Ռեկտորի որոշմամբ մասնակցում ռեկտորատի աշխատանքներին, ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հայտարարություններով, զեկույցներով և հաղորդումներով:

4) ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է Կենտրոնի և Համալսարանական ստորաբաժանումների փոխհարաբերությունները:

5) ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկներ և այլ գրություններ ու փաստաթղթեր:

6) Կենտրոնի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով կարող է հրավիրել խորհրդատվություններ, ըստ անհրաժեշտության՝ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորին կամ նրա ներկայացմամբ Համալսարանի ռեկտորին ներկայացնել զեկույցներ կամ առաջարկներ Կենտրոնի գործունեության վերաբերյալ:

7) Համալսարանի ռեկտորին ներկայացնում է Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու կամ վերապատրաստելու առաջարկություն:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են գիտական խորհրդի կողմից:

2. Կենտրոնի վրա չեն կարող դրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին հակասող պարտականություններ:

3. Կենտրոնը ունի տարբերանշան, հետևյալ նկարագրով.

Տարբերանշանը ներկայացվում է 2-ը 1-ի համամասնությամբ: Կարմիր քառակուսու մեջ վերցված ծառ, որի ճյուղերը համապատասխանում են Համալսարանի ֆակուլտետների թվին, քառակուսուց աջ, մեծատառերով գրված է ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» և «Երևանի Մխիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարան» բառերը:



**ԿԱՐԻԵՐԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆ**

Երևանի Մխիթար Հերացու Անվան
Պետական Բժշկական Համալսարան